ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2011 թվականի **թիվ 1/5**

քաղ. Մոսկվա

«ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի մասին» պայմանագրի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի քարտուղարության մասին» հիմնադրույթը (կցվում է):

Նախագահ՝ Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝ Ա. Ֆ. Շպիլևսկի

Նախագահի տեղակալ՝ Ս. Ն. Բայմագանբետով

Հավելված
Մաքսային միության անդամ
պետությունների մաքսային
ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 1/5 որոշման

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ «ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

1. Միավորված կոլեգիայի քարտուղարությունը (այսուհետ՝ Քարտուղարություն), «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի մասին» պայմանագրի 10-րդ հոդվածին համապատասխան, համարվում է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի աշխատանքային մարմինը (այսուհետ՝ Միավորված կոլեգիա):

2. Քարտուղարության գործառույթները վերապահվում են Դաշնային մաքսային ծառայությանը (Ռուսաստանի Դաշնություն):

3. Քարտուղարությունն իրականացնում է Միավորված կոլեգիայի աշխատանքի կազմակերպումը և տեղեկատվական ու տեխնիկական ապահովումը:

4. Քարտուղարության գործունեության ղեկավարումն իրականացնում է Միավորված կոլեգիայի պատասխանատու քարտուղարը:

5. Քարտուղարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

կազմակերպում և ապահովում է Միավորված կոլեգիայի նիստերի անցկացումը: Մաքսային միության անդամ պետություններում արտագնա նիստեր անցկացնելիս նշված աշխատանքն իրականացվում է Մաքսային միության ընդունող անդամ պետության մաքսային ծառայության հետ համատեղ.

ամփոփում է Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների կողմից Միավորված կոլեգիայի նիստերին ուսումնասիրության ներկայացվող

նյութերը.

ուղարկում է Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններ Միավորված կոլեգիայի նիստի օրակարգի նախագիծը և օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող փաստաթղթերի ու նյութերի փաթեթները՝ նիստն անցկացնելու ամսաթվից 10 օր առաջ.

ապահովում է Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններ Միավորված կոլեգիայի շրջանակներում ընդունված որոշումների և փաստաթղթերի ժամանակին ուղարկումը.

կազմակերպում է Միավորված կոլեգիայի նիստերին ուսումնասիրվող փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման հարցերով փորձագետների խորհրդակցություններ և աշխատանքային խմբերի նիստեր՝ Միավորված կոլեգիայի որոշումներին համապատասխան.

փոխգործակցում է Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների հետ Միավորված կոլեգիայի նիստի, Միավորված կոլեգիայի հերթական նիստի օրակարգում ներառվող հարցերով աշխատանքային խմբերի նիստերի և փորձագետների խորհրդակցությունների մասնակիցներին ժամանակին որոշելու մասով.

իրականացնում է հսկողություն Միավորված կոլեգիայի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների հետ համատեղ, տեղեկացնում է Միավորված կոլեգիայի նախագահին և անդամներին արդյունքների մասին.

փոխգործակցում է, իր իրավասության սահմաններում, Մաքսային միության այլ անդամների հետ այն փաստաթղթերի նախագծերի համաձայնեցման և նախապատրաստման մասով, որոնք քննարկվել են Միավորված կոլեգիայի նիստերի ընթացքում և ներկայացվել են ուսումնասիրության.

կատարում է այլ գործառույթներ՝ Նախագահի հանձնարարությամբ: